

Լ Ծ Ն Գ Յ Յ Գ

Ս. ՀՕՐՆ ՅՈՒՂԱՆԻՍԻ ԳԱՌՆԵՑՈՅ ԱՍՍՅԵԱՂ

ԽՐԱՏ ԿՐՕՆԱԻՈՐԱՑ

Ամենանուստ ծառայակիցս ձերի Քրիստոս Յիսուս՝ Յովհաննէս Գառնեցի, գրեմ զիր սու գրեալսպ ի զիրն կենդանի, և մանաւանդ քեզ որ քնթեոնուող գրան գրոյս այսորիկ։ Եւ քանի լուար յԱռաքելոյն Յակոբայ որ սակ. «Եթէ ամենայն ոք որ զիտէ զբարին և ոչ առնէ մեղք են նմա»։ Եւ զինչ է բարին. բարի է զբարին խորհել, և գբարին խօսել, և զբարին վաստակել և տալ տառապելոց։ Բարի է զողալ ի դառն դատաստանէն, և երկնչել յանհերիխ տանջանոցն, և փափաքել անանց փառացն, և անվասխան վախելու թեանցն։ Բարի է ըզցայգ և զցերեկ զեգերիլ ի գրունս ողորմութեան Աստուծոյ և համապագ հոգալ զան համօրէն առնինին, և ջերմ արտօսը իջուցանել ի վերայ ճնօտիցն յաղագս անաչառ հարցափորձին, և որ ոք անփոյթ առնէ զայսմանէ մեղք են նմա։

Մեղք են նմա եթէ որ ոք լինի կպարտ ամբարտաւան և ամբարխտ։ Մեղք են նմա որ ոք յոյժ ուտէ և յոր ըմպէ և ի տուէ ննջէ։ Մեղք են նմա որ ոք լինի յոյլ և թոյլ և ծոյլ և լոյծ և մեղկ, վաւաշտ և շաւլ։ Մեղք է յորանջին և ձգտիլն և անձաւորն հելտանալ։ Մեղք է յարատ հային և չարակինին և զչարն մտածել։ Մեղք է զողանալն և երգուիլն և աւելի անուն զենն մորտական։ Մեղք է բանսարկութիւն և անշահ զրուցն և զմարմինն պարարին։ Մեղք է մատնութիւն և եղբայրատեցութիւն և խոսք ննջին։ Մեղք է սխպահելն և ննեզ խօսելն և չար կամելն։ Մեղք է չերթալ սա հիւանդի և անտես առնել զակարսն և չբառնալ զկարիս կարօտելոցն։ Մեղք է բարկ ծիծաղելն և կատակ առնելն և զատարկաբանելն։ Մեղք է զիմադարձութիւն և անհնազանդութիւն և կամապաշտութիւն։ Մեղք է հաց ցաւոց

ուտելն և զայլոց մեղք հոգալն և զմեուեալն բամբասել։ Մեղք է մոռացութիւն և զգործս որդոց մարդկան խօսելն և ինքն իրաւ լինելն։ Մեղք է զայլոց փակեալ բանալ և զօտարաց պահեալն առնուլ և զեկեղեցոյ իրքն ընդ վայր վատնել։ Մեղք է զգործեցեալ մեղքն կրկնակի գործել և ըզգործեալն չխօստողանել և զայլոց մեղք հրապարակել։ Մեղք է զքրահանայն անգիտնել և զայլ կարգաւոր, զկրօնաւոր կամ զհաւատաւոր անարգել, և կամ զմի ոք ի փոքրկանց արհամարհել։ Մեղք է անաղօթ կենալն և անզեղջ մնալն և յարտասուաց խօսանիլն։ Մեղք է անէծք և նշոժս արձակել վայրսպար և հարկանել զմարդ կամ զանասուն և անզորով և անզութ լինել։ Մեղք է զմահունն օրն մտանալ և անպաշար երթալ զերկայն ուղին և անպտուղ լինել ի բարի արդտեսեացն։

Մուտք մեղաց բազմադմբ են ի մեղքն որ երեւելիք են և են որ աներեւոյթք։ Քանզի իշխան աշխարհիս այսորիկ հանապազ պատերազմի ընդ բնութիւնս մեր. զի հին է վիշապի և բազմահնար։ Արդ զգոյշ լեր և զգաստ, սուրբ և արդար, արթուն և զուարթուն, զի մի խորամանկեալ չարին ի ներքս մտցէ ընդ միտսդ կամ ընդ զգայութիւնսդ և յափշտակեցցէ զառաքելութեան գանձն և զու պարտաւոր գտանիս ի դառն դատաստանին. զի հեղգպար և ոչ պահեցեր հսկմամբ գտունն գանձի առաքելութեան։

Արդ այտուհետև արիացիր պահել զամուրս զմտացդ և զգայութեանդ, զի մի տուն գանձին անկանիցի մեծ կործանմամբ յաղագս անփութութեան քո։ Այլ եթէ հարցանել կամիս թէ ընդէ՞ր Աստուած թոյլ տայ սատանայի զայս այսպէս գործել. զիտացիր, սիրելի, զի Աստուած զհրեշտակ

և զմարդն անձնիշխանի արար և եթող զմեզ ի խնամք անձնիշխանութեան: Եթէ կամիմք զբարին գործեմք և ժառանգեմք զանուշ խոստուած անանց փառացն, ապա եթէ կամօք մերովք զչարն գործեմք, վրիպիմք ի յանանց փառացն և ժառանգեմք զլու աչացն և զկրճտել ստամանցն: Եւ եթէ կամիմք կամօքն մերովք զԱստուած ի գութ և յողորմ անձեմք ի վերայ մեր և լինիմք Աստուծոյ կամացն գործակից, որպէս ինքն մարգասէրն Աստուած մարգարէիւն ասաց. «Ոչ կամիմ զմահ մեղաւորին»:

Քանզի տնկեալ է ի բնութիւնս մեր նախանձել և ցանկալ: Սիրելի զբարին բարի է, և ատել զչարն, և այն բարի է. իսկ սիրելի զչարն, չար է. և ատել զբարին, և այն չար է. Թմինենոյն է սիրելութիւն և ատելութիւն: Նախանձել ընդ բարին բարի է, և նախանձել ընդ չարն չար է. և նախանձն մի է և նոյն: Իսկ ցանկալ բարոյն բարի է, և ցանկալ չարին չար է, և ցանկութիւն մի է և նոյն:

Արդ ո՞վ պատուական եղբայր, զօրացիր և քաջ լիբ, և զերեսանակ անձնիշխան կամաց պիտի կալ, զի մի գլորիցես յաջ կամ յանհակ անձնիշխան կամօք: Մի՛ մերձենար, մի՛ ճաշակեր, մի՛ հուպ լինիցիս ամենայն ապականացու իրաց:

Բայց ամենայն առաքինութեան առաջք և՛ հիմն զխոնարհութիւն արայ, և խարխիս դիր զօտերն, և սիւն զյոյսն, և աշտարակ հօգ զհաւատան, և աւարտ ամենայն բարեաց զողորմածութիւն, առանց որոյ ո՛չ ոք կարէ տեսանել զՏէրն:

Բայց մի սովորեցցես ննջել ցիւրիկով, զի մի՛ մալլ և մառախուղ գայցէ ի վեբար մտաց աչացդ: Եւ ամբարտաւան հոգի մի՛ ստանար, զի եթէ զամենայն գործս քո ի բարին կատարեցցես տքնութեամբ և արատասուօք, և եթէ բուն իսկ ի գլուխ և ի գագաթ առաքինութեան հլանիցես, և խոնարհութիւն ոչ ունիցիս, ոչ ինչ օգտիցիս, և մնաս արտաքոյ զրանն արտաբաստին ընդ յիմար կուսանան, որ ոչ ամբարին զողորմութիւն. այլ այնպէս է որպէս թէ ոք ի ծակ կարաս ջուր արկանէ որ ոչ առնու գտեղի: Նայ և Տէրն իսկ մարգարէիւն ասաց. եթէ ես յո՞ հանգեաց, եթէ ոչ ի հեզս և ի խոնարհս և յայնոսիկ որ գողանս ի բանից իմաց: Եւ ինքն Իսրուս որ յանհաս բարձրու-

թենէն խոնարհեցաւ, նայ որ առնէր և ուսուցանէր, զայս ասաց. եթէ յինէն ուսարուք, զի հեզ եմ և խոնարհ ստրկի: Եւ յորժամ ասաց Տէրն թէ ես և Հայր առ նա եկեցցուք և օթեվանս առ նմայ արասցուք. ընդէ՞ որ ոչ ասաց թէ ես և Հայր և Հոգին եկեցցուք. վասնզի խոնարհն զգեցեալ է զՀոգին Սուրբ: Եւ ահայ խոնարհութեամբն հողեղէն մարդն օթեվան լինի Սրբոյ Երրորդութեան:

Այլ եթէ վասն աղօթից հարցանել կամիս, ոչ գոյ չափ և սահման աղօթից, որպէս և Դաւիթ ասէր. Օրհնեցից զՏէր յամենայն ժամ, և այլ եթէ յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յամենայն ժամ. և այլ եթէ ես առ Աստուած կարդաց և Տէր լուաւ ինձ. և այլ եթէ եւթն անգամ յաւուրն օրհնեցից զքեզ վասն իրաւանց և. Բայց եւթն յայտ առնէ զանչափութիւն, որպէս և Տէր մեր ասաց ցՊետրոս վասն յանցման եղբօրն. ո՛չ ասեմ եւթն, այլ եւթանասնհինի եւթն թողցես. զի թէպէտ եւ է համարք եւթնասնհինի, չօրեք հարիւր և ինասուն, այլ այդ զանչափութիւն յայտ առնէ: Եւ այս աշտիճան զանվեր սկսողացն է զառաքինութեանցն զհանդէս:

Բայց դու սիրիլի, ընդ իշխանութեամբ ես և ի ներքոյ հարկաց հարց. և մանաւանդ մարմնովք զանդաղկոտ, զայս միայն արայ, որ ոչ մտանաս զնիշ աղօթիցն. այլ սակաւ սակաւ կատարեցես զօգտակարն ըստ կարի քուս:

Յորժամ արձակին ի գիշերային ժամէն, զու գնայ մուտ ի սենեակն քո և կանգնեա կանգուն ընդ արեւելս, եւթն անգամ ծուրկ կրկնելով սոսյ զայս մէկիկ սաղմոսարանս, եօթն անգամ. եթէ ես զքեզ աղաչեմ Տէր ընդ առաւօտու լուիցես ձայնի իմում. զտունդ բոլոր ասայ. և ապայ ասայ փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. և ապա սոսյ Օրհնութիւն և փառք Հօր և Որդ. Եւ ապայ սոսյ կանոն մի կամ այլ աւելի. զօր կամիս, և ի վերջ կանոնին սոսյ զաղացացն արեւագալին քարոզն և զիւր աղօթքն, և ապա զՀայր մեր:

Իսկ ի մէջօրէին ժամուս Տէրն մեր կայր բեւեռեալ ի խալին, և յայտ ժամու խաւարեցաւ արեգակն, արի և կաց կանգուն, վեշտասան ծունր կրկնեալ սոսյ զայս վեշ-

սասան սաղմոսատունքս, եթէ ո՛ր բնականն է յօշնութիւն բար., և ապա փառք, և ապա և ևս խաղաղութեան, Օրհնութիւն և ., զոր կանոն կամիս ասայ, և ի վերջն ասայ, Արթնուն մտօք և զիւր աղօթքն, Զդեցոյ մեզ Տէր Աստուած, և ապա զՀայր մեր որ յերկինս:

Իսկ ի յիններորդ ժամուն, վասն զի յայսմ ժամու Տէրն մեր արբ զլեզլին և զքցացալն, և ուժգին գոչմամբ ասաց գէլի էլին, արբ կաց ի վերայ ոտից քոց, և վեց անգամ ծուներ կրկնեա, ասելով զայս վեց սաղմոսատունքս, եթէ ի խորոց կարգացի. և ապա փառք. և ևս խաղա., օրհնութիւն և փառք. ապա սկսիր կանոն զոր կամիս, և ի վերջ կանոնին զԱւուր օրտիւն, և ապա աղօթք զՏէր զօրութեանցն, և Հայր մեր որ յերկին .:

Իսկ յերկոյնի ժամուն, վասն զի յայսմ ժամու իջաւ Տէրն մեր ի գերեզմանն, և իրցս անգամ ծուներ կրկնեա և երկցս անգամ ասայ զայս սաղմոսատունքս միայն: Եւ առ Աստուած կարգացի, և ապա փառք, եւ ևս խաղաղութեան: Օրհնութիւն և փառք. զոր կանոն կամիս ասայ, եւ ի վերջ կանոնին քարոզ Գոհացարուք զՏեսուներէ, աղօթք Տէր բարերար, և Հայր մեր .:

Իսկ զկնի եկեցեցէին զրոշմեա մատամբոյ զնշան խաչին Քրիստոսի, ընդգէմ արեւելից և արեւմտից, հրեւիսոյ և հարաւոյ, ընդ երկինս և ընդ երկիր, և զդէմս երեսաց քոց, և զանկողինսն, և ապա երկցս անգամ ծուներ կրկնեացս ասելով զայս սաղմոսատունքս միայն, եթէ խաղաղութեամբ յայսմ և ի սոյն ննջեացուք և զարթ.: Դու ես պաշտպան իմ Տէր և ի ձեռս քո. Ահայ Աստուած օգնական իմ և Տէր ընդոտնելի. և ապա ի գտնախաչի անկողին ընկողմեալ դարձայ զգէմսդ ընդ յարեւելից և ննջեա զունութեամբ:

Իսկ յորժամ գառաշինն զարթնուս ի քնոյն, դուն արբ կաց ի վերայ ոտից քոց, և երկցս անգամ ծուներ կրկնեա և զայս երիս սաղմոսատունքս միայն ասայ. եթէ ես ննջեցի և ի քուն եղէ. Աստուած յազանի ինձ նայեաց և Տէր յն., Ի մէջ գրեւորի յառնէի խոստովան լինել առ Տէր. և ապա փառք Հօր. և ևս խաղաղութեան. օրհնութիւն և փառք Հօր և Որդոյ. և ապա սկսիր և ասայ զկանոն զոր կամիս

և ի վերջ կանոնին զիւր քարոզն և զգրեւորոյն աղօթքն ասայ և ապա զՀայր մեր .:

Իսկ յորժամ հարկանին զհասարակաց ժամն, դու սթափեալ երգեա և փութով յառաջացաւ մուտ ի դահլթն և երկցս անգամ ծուներ կրկնելով զրոշմեա զգէմսդ նշան խաչին և ապա մտեալ ի դասն կանոնեա ի տեղին քո և ուշադրեալ ունկն կալ սաղմոսիցն, և ընթերցմանն և պաշտամանն, և մի սովորիր նստիլ ի ժամատեղին կամ զրուցել .:

Արդ ով պատուական եղբայր, տես և իմացիր խորին մտօքդ, զի ոչ եթէ քաջութիւն արծիւն երկու թևօքն միայն լոկ բարձրանայ այլ ունի փետուրս մանր և մեծ, և ամենայն զօրութեամբն սփռեալ ոչնայ ի բարձունս: Սոյնպէս և դու ոչ եթէ աղօթիւք միայն պարտիս հաճոյանալ Աստուծոյ, այլ խոնարհութեամբ և սղորմածութեամբ, հեղութեամբ և հանդարտութեամբ բազմալուրթեամբ և համբարութեամբ բազմալուրթ: Զի ոչ է պարտ դատել զեղբայրն մտօք կամ յայտնի: Պարտ է քեզ ամենեցուն հող և մոխիր լինել փոքու և մեծի:

Մի՛ լինիր բազմազրոյց և բամբասասէր. մի՛ արասցես բանասրկութիւն և աղմկարարութիւն. մի՛ ստեր կամ լսել զուսմբէ. մի՛ լինիր ինքնիրաւ և զահագլուխ. մի՛ ամենեւեկն զմեռած մարդ բամբասեացես. մի՛ մաշիր ի ցաւս ցանկութեան և ի վրեպանս պոռնկական խորհրդոց. մի՛ նստցիս ի հրապարակս, զի ազրիւր է մեղաց և շատք վնասին շարխօսութեամբ: Մի՛ ստանար քեզ մայրագիրս, քոյրագիրս և եւ խոստովանադարկունս: Մի՛ պոռնց ընկերի օթեմանս կալցիս ի տունս աշխարհականաց: Մի՛ սիրեացես ոսկի և արծաթ, այլ ուսիր լինել անինչ և անստացուած: Մի՛ լինիր զիմացարձ և հակառակող զի մի՛ ստեցիս յԱստուծոյ և ի մարդկանէ: Մի՛ անցցէ զքեւ ժամանակ աղօթիցն քոց, զի մի՛ անկանելցիս ի ծուլութիւն: Մի՛ լինիր բարկացող և զայրացիտ և ցատուցեալ, զի բարկութիւն մարդոյ զարգարութիւն Աստուծոյ ոչ զորձէ: Մի՛ պարտիր զաչաղքո ի տեսութիւն կանանց ի դիմաց, զի մի՛ արմատացի ի միտոյց ցնորք ցանկական: Մի՛ լինիր փոխատու աշխարհականաց, կամ սիրել զաշխարհ, և զվաշխառ, և զտոկո-

սիս: Մի՛ վրպարտեր զոք և կամ յանդի-
մաներ հրապարական, զի մի՛ կարի խոց-
եղ խայթեցես զնա: Մի՛ ընկենուր առաջի
եղբորն խօս կամ խնինք կամ թուք: Ժա-
մարբին ոչ է պարտ յանտուրբ տեղով թուք
ընկենուլ կամ ձեռն լուանալ: Զի ոչ է պարտ
բարկ ծիծաղել կամ բարձրաբարբառ գրու-
ցել. պարտ է հանապազ զիրք կարգալ
առանին աղոթիձինն:

Այլ զու սիրելի, զեղբորն կարինս կա-
տարեա, կարելով, կարկատելով, կոխելով
զչուխայն. նա և զայլ տկարութիւննս բառ-
նալով: Արքանեկեա ամենեցուն լըջ՛տու-
թեամբ, ի հիւանդան և ի տկարսն, ի կաղսն
և ի կոյրսն, ի խեղսն և ի խելխայթեալսն
հանապազ երթեւեկեա. զի Գրիստոս ի
սնարան Պօպա բազմեալ կայ: Եւ թէ քեզ
հասանէ հիւանդութիւն, զու գոհութեամբ
ընկալ: Եւ յորժամ զաղքատն կամ զայլ
կարեցուոր տեսանես զու մի՛ զգէ՛մսդ դար-
ձուցանիս ի նմանէ, զի զհետ նորա է Գրիս-
տոս:

Զհիւրսն հարց բանիւ բերանոյդ, ընդ
օտարսն զրուցեա ընտանեբար. զսգաւորսն
մխիթարեա յուսադրելով. զնեղեալսն ըս-
փոփեա սիրով. զուարթ երեւեցիր երեսօքդ
ամենայն մարդոյ: Զծիւրսն մի՛ պատուհա-
սեցես, զմանկագոյնսն մի՛ Գրիստարհես-
ցես: Բայց ի միսն և ի զինիսն մի՛ յաճա-
խեր. զի միսն զմիսն յարուցանէ, և զի-
նին զմիտքն ափշեցուցանէ:

Ամենայն իրաց ժամ և կշիւ և չափ
կայ. յորժամ խօսել կամիցիս յառաջ խորհ-
եայ և ապա խօսիր. քանզի լեզվաւ իբրեւ
զընուր ըմպեմք զանցանս: Եւ վասն այսր
իրաց մարգարէն ասաց. եթէ 'ասացի թէ
պահեցից զճանապարհս իմ, զի մի՛ մեղայց
լեզուաւ իմով: Բայց որչափ հնար կայ զու
գործաւոր մի՛ մտաներ, և զու զգործա-
ւորն մտօք մի՛ գատեցես:

Զաղօթն յորժամ առնիցես մի՛ քեզ
միայնոյ արացես, այլ ամենայն կենդան-
եաց, անբանից և բանաւորաց, կենդան-
եաց և մեւելոց, որ լեալ են, և սր կենսա,
և սր լինելոցն են, մինչ և ի վաղջան աշ-
խարհիս: Որ ոք զԱզաւայ գանցումն և
զայլ ամենայն յանցաւորաց զմեզքն իւր
անձինն ոչ համարի, այնպիսոյն աղօթքն
չէ ընդունելի: Յորժամ կամիցիս որ յա-
ղօթն արտառուք գայ, զու զքեզ քան

զամենայն մարդ մեղաւոր համարեա. և
եթէ ախորժես որ քո աղօթքն ելանէ յի-
շատակա քառալի Աստուծոյ, զու ամենե-
ւին զմարդ մի՛ տրամեցուցաներ: Բայց
արտնջողն և ցասկոտն հազիւ հասանէ ի
զագաթն առաքինութեան: Ըջմարիտ առա-
քինութիւն այս է, որ զամենայն մարդ
չահի ըստ իւրաքանչիւր պատուոյ:

Բայց զի՛ պիտոյ է մեզ տարբերիլ վասն
խրատու, զի ահա յառաջագոյն լուար յա-
ռաքելոյն Յակովբայ որ ասաց. եթէ ամե-
նայն ոք որ գիտէ զբարին և ոչ առնէ,
մեղք են նմա. և ահա ով ոք է որ ոչ գիտէ
զբարին. միայն այս է վասն այն որ կանք
ու գիտեմք և ոչ առնեմք զկամս Տեառն:

Յաղազս յայտրիկ Տէրն ասաց յառակա-
ւոր վարդապետութեան իւրով. եթէ ա-
մենայն որ գիտէ զկամս Տեառն իւրոյ և ոչ
արասցէ ըստ կամաց նորա, արբցէ քան
բազում:

Արդ ով պատուական եղբայր, արիացիր
և արայ զբովանդակ բարին, զայն զոր ու-
սար ի մանկութենէ, զայն զոր լուար ի
սուրբ հարցն, զայն զոր վկայէ քո միտքդ,
զայն զոր ընթեռնուս հանապազորդ, զայն
արայ և կատարեա, և Աստուած սիրոյ և
խաղաղութեան եղիցի ընդ քեզ:

Սակաւ բանքդ յիշելիք են մեծամեծ
պատուիրանաց Աստուծոյ, զի այսու յիշա-
տակաւ կատարեոցես զամենայն: Ողջ լիբ
ի սէրն Աստուծոյ և ի համբարութիւն Յի-
սուսի յաւերժ:

Հրատ. Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ

Ձեռ. ք. 1652

